ւորն Երուսաղէմի Գուիտոն, որ անկաւ գերի 'ի Տիրերա-
կան պատերազմին, և ետ փրկանս անձին իւրոյ զքաղաքն
Ասկալոն, և 'ի պահու ազատութեան իւրոյ երդուեալ էր
չառնուլ զէն միւսանգամ ընդդէմ Իսլամայ. սակայն դըր-
ժեալ նորա զերդումն իւր, ժողովեաց առ ինքն զփախըս-
տեայս և զապրեալս 'ի սրոյ, և դեգերեալ առ ժամանակ
մի այսր և անդր, յանկարծ երեւեցաւ առաջի Պողոմա-
յիդայ։ Եւ 'ի սմին ժամանակի սկսեալ էին տակաւ երե-
ւիլ զօրք Խաչակրաց 'ի ծովեզերս Ասորեաց, որք էին 'ի
Տանիմարքայէ, յԻտալիոյ և յԱնգղիոյ. ոչքա միաբանեալ
ընդ թագաւորին Գուիտոնի՝ պաշարեցին զքաղաքն։

Սալահատին իբրեւ զարծուի խոյացաւ անդ, և ճեղ-
քեալ զխումբս քրիստոնէից իբրեւ նետ թռուցիկ, որ
ոստնուցու 'ի գրկաց աղեղան, եմուտ 'ի բերդն, և յաշ-
տարակէ նորին զննեալ ետես զդիրս և զկազմութիւն բա-
նակին Լատինաց եւ եդեալ պահապանս 'ի քաջ արանց
գարձաւ անդրէն 'ի տեղի իւր։ Եւ մինչդեռ զհետ լեալ
էր մեծաւ ջանիւք բառնալ և ցրուել զպաշարումն քաղա-
քին, հասին անդ այլ գունդք Լատինաց և 'ի դերեւ հա-
նին զխորհուրդս նորա. այնուհետեւ հոգք մեծամեծք
սկսան տագնապել զնա, զի զծանրութիւն ապագայ վտան-
գին եւ զնեղութիւն մեծի խռովութեանն, իբրեւ զծով
փոթորկեալ յալեաց, գրեթէ տեսանէր առաջի աչաց իւ-
րոց։ Թող զԵւրոպականսն, քրիստոնեայք Սիւրիոյ և Տիւ-
րոսի, մի զկնի միոյ հասանէին յօգնութիւն Լատինաց.
մինչդի 'ի միջոցի քառասուն աւուրց եհաս թիւ զօրաց
նոցա 200,000, որովք ամրացուցին զբանակն իբրեւ բերդ
անմատչելի։ Եւ յաւուր միում յուսացեալ 'ի զէնս եւ 'ի
զրահս իւրեանց, իջին յասպարէզ մարտի, և ճակատեցան
ընդդէմ դնդին Սալահատինի, որ իբրեւ մահիկ տողեալ
էր 'ի դաշտին, և սաստկութեամբ բաղխեցան ընդ միմեանս.
ձախ թեւն Լատինաց շարժեաց զաջ թեւն Իսլամայ եւ
խորտակեալ ցիր և ցան կացոյց զնա, եւ անտի դիմեալ
'ի բուն բանակն հասին մինչեւ 'ի վրանս Սուլթանին։

Սալահատին դէտ ակն 'ի վեր կալեալ, յարձակեցաւ
'ի վերայ աջոյ թեւին դնդին Լատինաց, որոյ զօրավարէր
նա ինքն թագաւորն Գուիտոն. եհաս առ նա և Թոգիէ-